

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

*
* *

Եւ եկաւ զարուն, եւ անցաւ ամառ
բայց ես շտեսայ մի պայծառ արեւ,
Եւ կարկաչանու վտակը կայտառ
Հոկ արեան շիթեր ցայտեց իմ առջեւ:—

Եւ եկաւ թոշունն իմ հայրենի տան—
լարամայն ողջոյն առայ նորանից.
Այս, ողջով եկար, կոռոնկ սիրական,
Եւ անջատուեցար ողջով ինձանից:

Թօշնեցան ծաղկունքն իմ անոյշ երկրի,
Սառոյցը կապեց արիւնոտ վտակ.
Եւ պիտի ծաղկի կուրծքը սալերի,
Արդեօք կը տեսնեմ աղքարներն յստակ...

Երանի մէկ էլ աշքս քանայի,
Եւ դու իմ շէն տոնն, այժմ գերեզման,
Աւետաթերիդ ես ընդունէի,
Լսէի օրներգ քո վերածնովթեան:

ՍԱՐՆ Ի ՎԵՐ.

Դէսի վեր, դէսի վեր անվերջ է ուժիս.
Յոզնեցան քազուներս՝ այս կոռուսն անզօր,
Սպանեցաւ եւ վերջին ոյժն էլ ծնկներիս —
Դէսի վեր, սարն ի վեր, քաջասիրտ զինուոր:

*
* *

Ամիսի կարծրանան թող այս սեւ ժայռերը
Ամիսի թող սպառնաց անդունդն աճաւոր, —
Դեռ շունչ կայ ընթանումն շարժուումն ծեռ-
բեր —

Դէսի վեր, սարն ի վեր, ով արի զինուոր:

*
* *

Դեռ նեռու է կատարն անամպ ու յստակ,
Բայց եթէ շը հանենք այնտեղ մննք պսօր,
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է յաղթա-
նակ —

Դէսի վեր, սարն ի վեր, անվեհն ը զինուոր:

Յ. ՅՈՎԱՆՆՈԽԱՆ

ՊԱՐԹԵԿԱՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Ե Ի

ՆՐԱՆՑ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԵՅ.

(250 Քրիստոսից առաջ — 226 Քրիստոսից յետոյ)

(Եարունակութիւն) *

Չօր և որդու երկպառակութիւնը հաշտու-
թեամբ վերջացաւ. Որոգէսը Քահուրին իրեն գա-
հակից նշանակեց, այսու ամենայնիւ պարթևները
չոգուուեցան հոռվմայեցւոց տէրութեան նեղ վի-
ճակից, թէպէս և ներքին կոհեների ժամանակ
պարթևները օգնութեան էին համում թոյլ կու-
սակցութեանը, որպէս զի նա ոյժ ունենայ կոհեր
երկարացնելու, սակայն այդ օգնութիւնն էլ այն-
քան անշան էր, որ չէր կարողանում իւր նպատա-
կին հանել.

Եռապետութեան անդամների ներքին կոհւ-
ների ժամանակ էլ պարթևները չկարողացան հան-
գամանքից օգուտ քաղել, միայն 40 թուականին
Որոգէսը լսելով իրեն ապաստանած հոռվմայեցի
Քուինտուս Լարիենոս զօրավարին՝ մի մեծ բա-
նակ ուղարկեց նորա և Բակուրի առաջնորդու-
թեամբ գէպի Ասորիք, Պարթևնական բանակը նուա-
ճեց ամբողջ Ասորիքը. Բարզափրան սատրապը
մուտք գործեց Պաղեստին և մեծ ուրախութեամբ
ընդունուեցաւ հրեաներից, որոնք գէգոհ էին Հե-
րովդէսի կառավարութիւնից, Բարզափրանը Երու-
սաղէմում թագաւորեցրեց Անտիգոնոսին, Բակուրը
իւր մեղմ կարավարութեամբ սիրելի դարձաւ
նուաճած երկրներում. Լարիենոսը յառաջ խա-
ղաց, տիրեց Կիլիկիային և Փոքր Ասիային, բայց
երբ 39 թ. Անտոնիոսի զօրավար Վիհանիիսուս
Բասուսը նրա գէմ ելաւ, ստիպուեցաւ յետ նա-
հանքել մինչև Տորոս ուր Բասուսը յաղթեց պար-
թևական բանակին, ցրուեց Լարիենոսի նոր ժողոված
լէգէոնները, Լարիենոսը փախաւ Կիլիկիա և բըռ-
նուելով գլխատուեցաւ. Մի երկրորդ Ճակատամար-
տում պարթևները կրկին յաղթուեցան և ստի-
պուեցան թողնել Ասորիքը և Պաղեստինը. Երրորդ
Ճակատամարտը պարթևների և Հռովմայեցւոց տեղի
ունեցաւ 38 թ. յունիսի 9-ին և վերջացաւ պար-
թևների կատարեալ պարտութեամբ, Բակուրը ըն-
կաւ այս Ճակատամարտի մէջ, Սրանից յետոյ Ասո-
րիքն ու Պաղեստինը կրկին ընկան Հռովմայեցւոց
իշխանութեան ներքոյ:

Որոգէսը իւր սիրելի որդու մահուամբ սաս-
տիկ ընկճուեցաւ, Բակուրի տեղը նա թագաւոր
կարգեց իւր երկրորդ որդի Ֆըլլաւիսիւս, որ իւր
եղբայրներին սպանել առւաւ և այդ բանի մասին
չօր գէգոհութիւնը լսելով, նրան էլ հրամայեց

* Տնս. „Արաբատ“ համար Ժ. եթ. 456

խեղգել 37 թ. Որոգէսը պարթեաց թագաւորութեան զօրութիւնը հասցրեց իւր գագամնակէտին, նա իւր գրամների վերայ կոչում է իրեն «Արքայից արքայ Արշակ Եւերգէտէս Դիբայոս Եպիփանէս Ֆիլիպէլէն» և Ալլէնասէր տիտղոսը կրում էր նա իրաւամբ, որովհետև Խոսում էր յառարէն և հետաքրքրում յունական գրականութեամբ, մինչև անգամ իւր որդու հարսանիքի ժամանակ Արտաշատում Ներկայացնում էին Եւրիպիտէսի կատակերգութիւններից մէկը, Որոգէսը պարթեական տէրութեան մայրաքաղաքը դէպի արևմուտք փոխադրեց, և սրա ու Բակուրի ժամանակն էր, որ Տիգրոնը տէրութեան իսկական մայրաքաղաքը դարձաւ:

Գրատեսկու Դուռ իւր թագաւորութիւնը սկսեց կոտորելով իւր եղայրներին և սպանել տալով նոյն իսկ իւր որդուն, նրա անգիտութիւնից երկիւղ կրելով աւագանին, սկսաւ փախէլ օտար երկիրներ, Անտոնիոսը յարմար ժամանակ համարելով պարթեաներին ընկճելու, պատրաստեց յարձակումն գործելու նրանց վրայ, Պարթեաց տէրութեան հիւսիսային կողմից սահմանակից մանր տէրութիւնների յարաբերութիւնները չետաեալ կերպով էին կազմակերպում. 67 թ. Արտավատականի Մարատանում Թագաւորում էր Տիգրանի փեսայ Միհրատը նրա գերեցիանութեան ներքոյ, 65 թ. Միհրատի յաջորդող Դարենը հապատակութիւնն էր յայտնել գոմակուին, իսկ թիւ յետոյ Հայաստանի հետ միասին Արտավատականն էլ ընկել էր պարթեական գերիշխանութեան ներքոյ: Մինչեւ Բակուրի մարզ Հայաստանը մնաց պարթեաց գերիշխանութեան տակ, իսկ ապա կրկին ծանաչեց հովվմէական գերիշխանութիւնը: Անտոնիոսը համոզուած լինելով, որ Նվիրատի տահմանը դժուար է անցնել, վճուց Հայաստանի վերայով յարձակումն գործել նախ Արտավատականի ել ապա բուն Գարսկաստանի վերայ: Մինչ խաղաղութեան բանկցութիւններով գրադեցնում՝ էր պարթեաց Թագաւորին, 36 թ. մոտաւ Հայաստան, որուեից օգնական տուաւ և հազար հայ հեծելազօր, մոտաւ Արտավատական, պաշարեց Գրասապա մայրաքաղաքը, ուր ապավնել էին Արփորագանէսի որդի Արտավազը Թագաւորի կանայքը եւ որդիթը: Մարաց Արտավազը Թագաւորը գնացել էր Գրաստէսին օգնութեան: Գարթեաց Թագաւորը հազի 40 հազար զօրք ունէր դէմ ղնելու հովվմացեցիներին: Գրաստէսն ու Արտավազը յարձա-

կութցան Անտոնիոսի վերջապահ զնիի վերայ եւ ջարդեցին 7,500 մարդ: Հայոց թագաւոր Արտավազը այնպիսի սարսափ զզաց այս հովվմէական պարտութիւնից յետոյ, որ իւր 13 հազար մարդուց բաղկացած բանակով յետ փախաւ դէպի Հայաստան, առանց անզամ փորձ փորձելու Անտոնիոսի բանակին միանալու: Պարթեաց բանակի շարունակ յարձակումներից ստիպուած, Անտոնիոսը բաւնակութիւն սկսեց Գրաստէսի հետ, որ թոյլ տայ իրեն զօրքով միասին յետո նահանջելու. թէպէտ և Գրաստէսը համաձայնուեց, բայց երբ Անտոնիոսը պաշարումը վերցրեց և սկսեց յետո նահանջել, Գրաստէսը հալածեց նրան մինչև Հայաստանի սահմանը՝ մեծ կորուստներ պատճառելով, Անտոնիոսի բանակը կիսով չափ սպառուած, հիւսնդութիւնից, սովից և ցրտից նեղուած, մոտաւ Հայաստան եւ անշուշտ սոլորովին կջնջուեր, եթէ Արտավազդ թագաւորը իրաւոնը ոտուած ըլինէր Հայաստանում ճմերելու: Հռովմացեցոց այս պարտութեան գլխաւոր պատճառը իրենց աշխարհագրական տգիտութիւնն էր և Անտոնիոսի շուտափոյթ պատերազմական ձեռնարկութիւնները, սակայն նրանի միշտ տվյու են եղել մեղքը ուրիշի վրայ ծգելու, այս անզամ էլ իրենց պարտութեան պատճառ համարեցին Հայոց Արտավազդ թագաւորին:


Հովվմէական բանակի աւարը բաժանելու միջոցին, Մարաց Արտավազդ Թագաւորի բաժինը քիչ ընկաւ, ուստի և նա գդգուն Գրաստէսից, բանակութեան մէջ մտաւ 35 թ. Անտոնիոսի հետ երբ Անտոնիոսը խորամանկութեամբ Հայոց թագաւոր Արտավազդին, որ իեր թէ իրեն լաւաճանել էր, գերի բռնեց եւ Հայաստանը նուածեց 33 թ., Արաքսի ափին տեսակցութիւն ունեցաւ Մարաց Արտավազդի հետ, և գաշն կռեց. Հայաստանի արևելեան մի մասը նրան տուաւ, հովվմէական գնական գնդեր ուղարկեց նրան պարթեաց ընդգէմ, որի փոփարէն ինքն էլ Մարաց գնդեր ստացաւ Ուկտաւիանոսի դէմ: Պատերազմի մէջոցին Հայոց թագաւոր Արտավազդի որդի Արտավատաս կամ Արտավազէս թէ ազատութելով Անտոնիոսի ձեռքից, փախել էր պարթեական զօրքով յետ էր թերել նորան Հայաստան Թագաւորեցնելու: Մարաց Թագաւորը օգնութեամբ հովվմէական գնդերի յետ վանեց պարթեաներին: Սակայն եղած Անտոնիոսը Ազցիուսի ծակատամարտի ժամանակ յետ կանչեց իւր

զնդերք առանց Մարաց գօրքերը յետ ուղարկելու, Արտասազդը անօգնական մնաց, յաղթուեց պարթեներից եւ գերի ընկաւ նոցա ծեռքը: Մարտատանն ու չայասուանը կըրկին ընկան պարթեաց գերիշխանովթեան ներքից, հոռվմէական պահակ գօրքը չայասուանում ջարդուեցաւ եւ Արտաշէս Բ-ը բարձրացաւ իւր հայրենի գաճը 32 թ. Քրիստոսից առաջ: Մի տարի յետոյց պարթեաց տէրութեան ներքին խոռվութինների միջոցին, Մարաց Արտասազդ թագաւորը փախաւ եւ ապավինեց հոռվմայեցիներին, իսկ չայոց Արտաշէս թագաւորը՝ յոյս չունենալով պարթեաց պաշտպանովթեան վերաց, բարեկամութեան դաշն հաստատեց հոռվմայեցիների հետ:

Քրատէսի անդժութիւնների պատճառով ներքին խոռվութիւններ բարձրացան Պարսկաստանում 33 թուականից մինչև 27 թ. Քրատէսի հականակ թագաւորեց Տիրիդատէս Բ-ը, որ նախ պարտութիւն կրելով ապաւնեց հոռվմայեցիներին: այնուղից կրկին յարձակուեց պարթեաց տէրութեան վերաց և Քրատէսին հալածերով թագաւորեց նրա փոխանակ: Քրատէսը ապաւնեց Խկիթացւոց և նրանցից օգնութիւն դժուելով 26 թ. յուլիսին կրկին նստաւ իւր գահը:

(Հարութակելի)

Ս. Քարտինան.



ՄԻ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅՈՒՏԱՆԻ ՊԱՏՐԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԻ
ՎԵՐԱՅ.

ԸՍՏ

ՆՈՐԱԳՈՅՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵՈՒՅՑ.



Հայաստան աշխարհի հնագոյն պատճեննեան մասին հաւասարի տեղեկութիւն են հազարում մեզ նախ ասորեստանցիք և ապարուն երկրի սեպագիրները, որոնց վերծանութեան համար տակաւին միայն փորձեր են լինում: Ասորեստանցիք այս երկիրն անուանում են Ուրարտու, որին համապատասխանում է Դ. Թագ. ԺԹ. 37. յիշուած «յերկիրն Արտարաց», և Ծայի 37, 38. երեմ. 51, 27. «Արարատեան թագաւորութիւն» խօսքը, իսկ բնիկ ժողովուրդը իւր զիմաւոր Խալդիս աստուծոյ անունով Խալդինի է կոչուում (Խալդակը): Յոյները յիշում են Փոնտոսում

և Հայաստանում ապրող մի ժողովուրդ խաղութիք անունով որ շփոթելով խառնուում են քաղլէացի անուան հետ): Հայաստանի այս հնագոյն բնակիչները յետազայ ըրնակիններից բոլորովին զանազանուում են իւրեանց լեզուով: Այդ լեզուն նման է սումերեան լեզուին և Սուսիանայի բնիկ լեզուի մի բարբառն է, որ ըստ իւր կազմութեան ցեղակից է երեսում կամ նմանութիւն ունի ուրալ—ալտայեան լեզուներին: Ուրարտուցիք կամ Խալդերը սկզբում անշուշտ ապրում էին Վանայ ծովից դէպի արեւելք—Արարատ (Այրարատ) կենաբոնական նահանգը իւր անունով պարզ ցոյց է տալիս նոցա բնակութեան հետքը—յետոյ յառաջացան դէպի հարաւ և արեմուտքը: Մի շատ ընդունակի եռանդու և գործունեայ աշխարհակալ ցեղ այստեղ մի մեծ պետութիւն է հրմնել և ոչ անյաջող կերպով կռիւներ է մղել իւր ախոյեան ասուրեանցոց հետ: Այս պետութեան մայրաքաղաքն էր այգեշտան Վան—Ցոսալը իւր անառիկ միջնաբերդով: Այդտեղի աղջային Խալդիս աստուծոյ տաճարը աստուածաբետական կազմակերպութիւն ունեցող տէրութեան կենաբոնն էր: Մէնուաս թագաւորը իւր անունով կոչուած զարմանահրաշ ջրանցքով (այժմ կոչուում է Շամիրամի առու) իւր քաղաքին ջուր էր մատակարարում: Ոետութիւնն իւր փառաւորութեան հեռակետին հասաւ սորա որդի Արգիստիս Ա-ի օրով, որ ստիպուեցաւ վեց անգամ պատերազմի դաշտը դուրս գալ Սաղմանասար Գ.-ի (783—773) դէմ որի թոյլ յանդոյների ժամանակ Ուրարտուն իւր դաշնակից և աւատական իշխանութեանց հետ իրօք զերիշխան էր առաջաւոր Ասիայում: Սակայն Ցիգլատպիլեզարի գահ բարձրանալուց ի վեր ասորեստանցիք զօրանալով իսիանտեցին այս առժամանակեայ հզօր պետութեան դիրքը: Մինչեւ անգամ 735 թ.-ին Ցոսալ մայրաքաղաքն աւերտուեցաւ: Բայց և այնպէս թուլացած Ուրարտուի պետութիւնը շարունակեց իւր գոյութիւնը ասորեստանցոց սիսերիմ թշնամի մնալով: Այս պատճառու 681-ին Սենեքերիմի հայրասպան որդիքն այնտեղ փախան: Ապա առ սակաւ սակաւ այս երկու մեծ պետութեանց յարաբերութիւններն աւելի բարե-